ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2024թ. N __ -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 45-Ն որոշման 1-ին կետի 10.1-ին ենթակետից հետո լրացնել նոր 10.2-րդ և 10.3-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.2) Երևանի վարչական տարածքում 5-ից մինչև 12-րդ գոտիների 301-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական վճարի չափի 80 տոկոսի չափով, եթե դիմումատուն Երևան համայնքի հանդեպ դիմումի տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ.

10.3) Երևանի վարչական տարածքում 5-ից մինչև 12-րդ գոտիների 500-ից մինչև 1000 քառակուսի մետրը ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական վճարի չափի 50 տոկոսի չափով, եթե դիմումատուն Երևան համայնքի հանդեպ դիմումի տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը:

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի կարգավորումները՝ Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 45-Ն որոշման 1-ին կետը 10.1-ին ենթակետից հետո լրացնել նոր 10.2-րդ և 10.3-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.2) Երևանի վարչական տարածքում 5-ից մինչև 12-րդ գոտիների 301-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական վճարի չափի 80 տոկոսի չափով, եթե դիմումատուն Երևան համայնքի հանդեպ դիմումի տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ.

10.3) Երևանի վարչական տարածքում 5-ից մինչև 12-րդ գոտիների 500-ից մինչև 1000 քառակուսի մետրը ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական վճարի չափի 50 տոկոսի չափով, եթե դիմումատուն Երևան համայնքի հանդեպ դիմումի տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

Նախագիծը մշակվել է սույն թվականի փետրվարի 21-ին ՀՀ Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում կառուցապատողների, ԱԺ պատգամավորների և գործադիր իշխանության մարմինների մասնակցությամբ տեղի ունեցած լսումների շրջանակում հնչած առաջարկների և բարձրաձայնված խնդիրների լուծման շրջանակում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ